ԼԻԼԻԹ ՊԱՊԻԿՅԱՆ

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

«Մի համակրելի մտերմություն կա Գեղամ Սարյանի պոեզիայի մեջ, որը համակում է մեղմորեն: Գեղամ Սարյանը փայլուն չէ, չունի «շլացուցիչ» ոչինչ: Նա համեստ է և հավասարակշիռ: Բայց ջերմ է»[1]: Այդ ջերմությունը զգացվում է նաև Գեղամ Սարյանի չափածոյի խոսքարվեստում:

Գրողի լեզուն և ոճը, մասնավորապես նրա բառապաշարն ուսումնասիրելիս մեծ նշանակություն է ձեռք բերում նորակազմ բառերի, նոր բառիմաստների և բառագործածությունների քննությունը: Վերջիններս «գնահատվում են որպես հեղինակի ներդրում գրականության լեզվի զարգացման մեջ կամ որպես արդյունք գեղարվեստական նպատակներով առաջացած անհատական բառաստեղծման»[2]: Գեղարվեստական ստեղծագործության բառապաշարի ուսումնասիրության առումով կարևորվում է անհատական-հեղինակային նորակազմությունների քննությունը, որի դեպքում «պարզվում են տվյալ հեղինակի բառային-գեղարվեստական ստեղծագործության անհատական ոճին բնորոշ հնարքներն ու միջոցները»[3]: Ոճական նպատակադրումով, ասելիքը բանաստեղծականորեն, պատկերավոր ու հուզական արտահայտելու համար ստեղծագործողն իր կազմած նոր բառերով, նոր բառագործածությամբ, բառի իմաստային դաշտի ընդլայնումով թարմացնում է տվյալ լեզվի բառապաշարը, նորովի հնչեցնում մոռացված, «դարերի փոշով ծածկված» շատ բառեր ու արտահայտություններ: Սրանց մեջ առավել հաջողվածները «կարող են արմատանալ լեզվի մեջ»[4], դառնալ գրական լեզվի հարստությունը և մուտք գործել տվյալ ազգային լեզվի բառագանձը: Այսպիսով գրողը նպաստում է նաև լեզվի բառային կազմի համալրման գործընթացին:

Անհատական նորաբանությունները, ստեղծվելով խոսքային համապատասխան իրադրության մեջ, նպաստում են լեզվի արտահայտչականության հնարավորությունների ընդլայնմանը: Ուստի գրողի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու համար կարևոր է հեղինակային նորաբանությունների քննությունը, քանի որ դրանք առարկաները, երևույթները, հասկացությունները, շրջակա աշխարհը անհատական ընկալումով արտահայ-

---

[1] Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հտ. 12, եր., 1985, էջ 362:
[2] В. В. Виноградов, Проблемы русской стилистики, М., 1981, ст. 205.
[3] Տես նույն տեղում:
[4] Տես Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, եր., 1989, էջ 224:

տելու արդյունք են: Որոշակի դժվարություն, եթե չասենք անհնարինություն և պայմանականություն կա այս կամ այն գրողի կերտած նոր բառերը ճշտությամբ և հստակորեն որոշելու հարցում, քանի որ համապատասխան հեղինակային բառարաններ գրեթե չկան: Դժվարությունը, երբեմն էլ անորոշությունը պայմանավորված են նրանով, որ առանձին դեպքերում հնարավոր չէ միանշանակ պնդել, թե այս կամ այն բառը Սարյանից առաջ գործածվել է, թե՝ ոչ. միգուցե այդ բառը երբևէ գործածվել է որևէ գրողի երկում, բայց ընդգրկված չէ արդի հայերենի բառարաններից որևէ մեկում: Այս դեպքում հեղինակային նորաբանությունների քննությունը անհնարին է դառնում: «Անհրաժեշտ է նշել,- գրում է Ս. Էլոյանը,- որ հեղինակային նորաբանությունների ստույգ որոշման խնդիրը հղի է թյուրիմացություններով ու սխալներով, քանի դեռ չունենք բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները, էլ չենք ասում նրանց նորաբանությունների ցանկը»[5]:

Այս բոլորով հանդերձ նոր բառերի հեղինակային պատկանելության մասին պետք է խոսել որոշ վերապահությամբ:

Գեղամ Սարյանի չափածոյից քաղված հավանական նորաբանությունների վերաբերյալ մեր բոլոր դատողություններն ու դիտարկումները սահմանափակվում են այն բառագանձի շրջանակներով, որ ընդգրկված է արդի հայերենի բառարաններում: Այս սկզբունքով քննելով Սարյանի չափածո՝ հեղինակային նորաբանություններ ենք համարել բոլոր այն բառերը, որոնք.

ա/ Չկան Ստ. Մալխասյանցի /ՀԲԲ/, էդ. Աղայանի /ԱՀԲԲ/, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում /ԺՀԲԲ/[6]:

Այդպիսիք են հետևյալ նորաբանությունները՝ «Ես դիտեցի կանաչները նրբածին» /ԵԺ, հ.1, 51/[7], «Եվ տնջալամա լուսի վառքով Փողոցները կգուգվեն» /ՀՍ, 19/[8], «Մեր լուսավարդ, քանդակազարդ Ոի միշտ զվարթ Երևան»/ԵԺ, հ.1. 412/, «Պարտեզի մեջ բլուրեռաձես Շատրվանով ավազան» /ՀՍ, 18/, «Եվ քարայծեր ցլուդաեղջյուր...» /ՀՍ, 95/:

բ/ Չկան ՀԲԲ-ում, իսկ ԺՀԲԲ-ում և ԱՀԲԲ-ում տրված են միայն Գ. Սարյանի չափածոյից քաղված օրինակներով կամ հզվդ. /հազվադեպ/ նշումով, ինչպես՝ *խոլաթև, սևաթև /հ.1,25/, շաքարահոս, զվարթահոս /հ.1,306/, խինդաշաղախ /հ.1,74/, շուշանաթերթ /հ.1, 272/, երկաթաթոր /հ.1,413/, գեղիրան /հ.2, 221/, խոհածին /հ.2, 218/, բյուրեղակուռ /հ.1, 363/, լուսագես /հ.1, 263/,*

---

[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Փակագծերում նշված են բառարանների համառոտ անվանումները:
[7] Գ. Սարյան, Երկերի ժողովածու, հ. 1, հ. 2, եր., 1969:
[8] Գ. Սարյանի «Հրաշալի սերունդ» պոեմը /1950/ այստեղ և այսուհետև ՀՍ համառոտագրությամբ է նշվում:

դառնաթով /հ.1, 30/, ոսկեսապատ /հ.1, 306/, եզաթայլ /ՀՍ, 112/, նրբաթև /ԵԺ, հ.2, 107/, *խոհածին /ԵԺ, հ.2, 218/, և այլն:*

Այս շարքի նորաբանությունները, որոնք փաստագրված են բառարաններում, կարևոր նշանակություն ունեն մասնավորապես դրանց հեղինակային պատկանելության, առհասարակ դրանց մասին պատկերացումն ավելի հավաստի ու հիմնավոր դարձնելու գործում:

գ/ Նույնությամբ կամ միայն էդ. Աղայանի բառարանում և տրված են այն իմաստով ու նրբերանգի բացատրությամբ, որով գործածել է Սարյանն իր բանաստեղծություններում կամ ունեն հզվդ. նշումը: Ամենայն հավանականությամբ, դրանք բառարան են ներմուծվել Սարյանի չափածոյից:

Այսպես, <u>դագաղածայն</u> բառը բացատրվում է այսպես. ածական նշումով, դագաղի ձայն հանող՝ ունեցող /ԱՀԲԲ, հ.1, էջ 270/. օրինակ.

<u>Դագաղածայն</u>՝ որպես մահասարսուռ քայլերգ,

Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ: /ԵԺ, հ.1, 283/

Կամ՝ <u>մոխոանուտակ</u> բառը բացատրվում է հետևյալ կերպ. ած. 1. որտեղ մոխիր է կուտակվել, 2. փխբ. մոխրագույն ամպերով պատած, մոխրակուտակ երկինք /ԱՀԲԲ, հ.2, էջ 1025/

Օ՛, երկինք <u>մոխոանուտակ.</u> օ՛. անձրև, երկնի արցունք,

Օ՛, զեփյուռ, մաքուր համբույր, օ՛, երկինք մոխրակուտակ... /ԵԺ, հ.1, 35/

<u>Երկաթածայն</u> նորաբանությունը բացատրվում է. երկաթի ձայն հանող, երկաթի պես հնչող /ԱՀԲԲ, հ.1, էջ 346/

Ոէ մինչ լույս լսեցի ես

<u>Երկաթածայն</u> երգը նրա... /ԵԺ, հ.1, 257/

Ի դեպ, պետք է նկատել, որ 20-րդ դարի 20-30-ական թվականների չափածոյում բավական բարձր հաճախականություն են ունեցել երկաթ բառով ստեղծված նորաբանությունները:

Գեղամ Սարյանը հաճախ ստեղծել է դիպվածական բառեր, որոնք, ինչպես հայտնի է, հիմնականում ունենում են մեկանգամյա կիրառություն և գրական լեզվի բառապաշար չեն անցնում: Ինչպես գիտենք, դիպվածային բառերը գործածվում են խոսքային տվյալ իրավիճակում նյութի թելադրանքով կամ հեղինակի ոճական որոշակի նպատակադրումով՝ խոսքն ավելի համոզիչ, պատկերավոր դարձնելու համար[9]: Սարյանի չափածոյում գործածված դիպվածային բառերից են՝ *փնջալամպ, մոխրակուտակ, բյուրեղագես, դագաղածայն, նյուղաեղջյուր, ականջել, երկաթաթոք, երկաթածայն:*

---

[9] Տե՛ս, Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 140:

Անշուշտ, այս բառերը անհաջող կազմություն-կիրառություններ են: Առանձին դեպքերում բովանդակությունը արտահայտությանը չի ներդաշնակում կամ անորոշ է նորաստեղծ բառի իմաստը: Այս նորակազմությունները անարտահայտիչ են և ստեղծվել են բանաստեղծի ապրած ժամանակաշրջանի թելադրանքով: Ուշագրավ է նաև այն, թե ինչ ուղիներով են ձևավորվում հեղինակային նորաբանությունները: Գեղամ Սարյանի չափածոյում գերակշռող են հիմնականում բառաբարդման եղանակով կազմվածները: Դրանց մի մասը կազմվել է առարկաները, երևույթները նոր ձևով արտահայտելու անհրաժեշտությամբ, ինչպես՝ *երկաթածայն, լուսավարդ, բյուրեղագեմ, ոսկեսապատ, լուսագեմ, բյուրեղակուռ, մոխրակուտակ, փնջալամպ:* Մի մասն էլ բանաստեղծը գործածում է իր ասելիքը, խոհերն ու տրամադրություններն արտահայտչական ու ոճական անհրաժեշտ նրբերանգներով ներկայացնելու համար, ինչպես՝ *նրբածին, նրբաթև, սևաթև, զվարթահոս, դառնաթով, գեղիրամ, խոհածին, խոլաթև:* Գեղամ Սարյանի չափածոյում քիչ թիվ են կազմում նորակերտ բայերը: Այսպես, Սարյանը կերտում է ականջել բայը, որը ԺՀԲԲ-ում /հ.1, էջ 24/ ներկայացված է հեղինակային վկայությամբ. Սակայն հոգիս, <u>ականջում է</u> նոր կյանքի երկաթածայն քայլերին /Սար./: Կամ հետևյալ օրինակում.

Ես դիտեցի լուրթ ջրերը փրփրածին,
<u>Ականջեցի</u> նրանց մրմունջը տրտում... /Եժ, հ.1, 51/

Բայական նորաբանություն է նաև <u>առծաթել</u> բայը, որը ԺՀԲԲ-ում /հ.1, էջ 225/ ներկայացված է հզվդ. նշումով և հեղինակային վկայությամբ. ժամանակը կարծաթի մազերդ մի օր /Սար./: Այս բայը Սարյանը կերտել է արծաթ գոյականից: Կամ՝

Նայեց աշխարհին մի գունատ լուսին,
<u>Արծաթեց</u> լույսով ջրերը զվարթ: /Եժ, հ.1, 154/

Որոշ նորակազմ բարդություններ ստեղծելիս Գ. Սարյանը դիմել է բառակազմության մեկ այլ գործուն եղանակի՝ համաբանությանը: Այդպես է ծնվել <u>շուշանաթերթ</u> նորաբանությունը՝ ծաղկաթերթ բառի նմանողությամբ:

Կիջնի ահա երեկոն, կբացվեն լույսի
<u>Շուշանաթերթ</u> լամպերի կոկոնները վառ... /Եժ, հ.1, 272/

Այս քառատողում *շուշանաթերթ* նորակազմությունը նույն դերն է կատարում լամպի համար, ինչ-որ ծաղկաթերթը՝ կոկոնի համար: Այն և՛ կազմության, և՛ իմաստային առումներով ունի ընդգծված քնարականություն, ցույց է տալիս գույն , ձև և ստեղծում է որոշակի տրամադրություն:

Գեղամ Սարյանի չափածոյում որոշակի արտահայտչականություն են ստեղծում նաև բառերի կրճատ ձևերով գործածությունները:

Ընդունված կարծիք է, որ լեզվում կատարվող կրճատումները, նույնիսկ հնչյունների կրճատումը արտահայտությունն են այն բանի, որ լեզուն նախապատվությունը տալիս է առավել սեղմ և կրճատ ձևերին: Բառերի կրճատ ձևով գործածություններ կան Սարյանի չափածոյում, որոնք, սակայն, մեծ թիվ չեն կազմում: Քննենք մի քանի բնագրային օրինակներ.

Մեր ծորերը խոր, լեռները անառ.

Գանձերն անսահման երկրի ընդերքում... /ԵԺ, հ.1, 339/

Ընդունված և տարածված բառային տարբերակը անառիկն է, սակայն հեղինակը նախընտրել է առանց ին մասնիկի կարճ ձևը՝ անառ:

Նկատելի է, որ հեղինակը հաճախ է դիմում սեղմության այս միջոցին և գործածում անածանց ձևեր, ինչպես օրինակ բազմադարան և դամբարան բառերի փոխարեն կիրառում է բազմադար և դամբան բառաձևերը, որոնք սեղմ են, հատու և արտահայտիչ:

Մեր բազմադար տառն եմ սիրել,

Մեր հայրենի գիրքը: /ԵԺ, հ.1, 314/

Այն դամբանի վրա ամեն մի քար

Ողողված էր որքա՜ն թախիծով ու լույսով: /ԵԺ, հ.1, 297/

Այսպիսի բառերի գործածությունը նպատակամղված է ոչ միայն խոսքի թարմության, այլև սեղմության ապահովմանը: Սարյանի բանաստեղծություններում նորաբանությունները անփոխարինելի դեր ունեն հատկապես չափածո խոսքի կարևոր հատկություններից մեկի՝ բարեհնչության ապահովման համար: Այդ դեպքում կարևոր է ոչ միայն նորաբանության հնչյունական կազմը, այլև դրա նշանակությունը բանաստողերի հնչյունական շղթայի հետ: Հնչյունական ներդաշնակության առումով կատարյալ է այնպիսի խոսքը, որ հարմար է արտասանության համար, հաճելի՝ լսողությանը: Խոսքի բարեհնչության ապահովման գործում առաջնակարգ դեր ունի հանգավորումը: Բանաստեղծական խոսքի բարեհնչությանը առավել չափով է նպաստում այնպիսի հանգավորումը, որն արտահայտված է լինում միայն նորաբանություններով: Սարյանի չափածոյում հետաքրքրություն ունեն հանգավորման այդպիսի մի քանի դեպքեր.

Աշխարհ, ես էլ գիշեր ունեմ սևաթև,

Երբ իմ հոգին տրտունջ ունի ու հառաչ,

Գարուն ունեմ, ծմեռ ունեմ խուլաթև,

Աշխարհ, ես էլ մի աշխարհ եմ քո առաջ: /ԵԺ, հ.1, 25/

Հայաստանի զվարթաիոս

Ջրերն են անուշ,

Խաղողների շաքարաիոս

Ճռերն են անուշ: /ԵԺ, հ.1, 306/

Նկատելի է, որ ընդգծված նորաբանությունների վերջին բաղադրիչները արտահայտված են նույն բառերով, որոնք նպաստում են խոսքի բարեհնչությանը: Ինչպես գիտենք, անհատական նորաբանությունների մեկնության հարցում առանձնակի կարևորություն ունեցող հանգամանք է դրանց բազմիմաստության բացահայտումը: Գեղամ Սարյանի չափածոյում դառնաթով նորաբանությունը հանդիպում է մեկ անգամ: ԺՀԲԲ-ում /հ.1, էջ 471/ այն ներկայացված է Սարյանի հետևյալ գործածության հիման վրա.

Դառնաթով հոգով ես նոր իմացա,

Որ ես եմ թախծոտ, տխուր ակացին: /ԵԺ, հ.1,30/

Մեզ հայտնի չէ այդ բառի այլ գործածություն: Չնայած դրան՝ այդ նորաբանությունն ԱՀԲԲ-ում ներկայացված է երկու նշանակությամբ. դառնաթով, ած./բնստ./: 1. Դառնությամբ թովված, համակված՝ տոգորված: 2. Դառնությամբ՝ տխրությամբ թովող՝ գրավող, գրավչության հետ նաև դառնություն ունեցող՝ պարունակող /ԱՀԲԲ, հ.1, էջ 278/: Այսպիսի բառերի երկրորդ իմաստային առումը գերազանցապես բառարանագիրների կողմից է առաջ քաշվում, հնարավոր է համարվում բառի նաև այդպիսի նշանակությամբ գործածությունը: Բառարանում այդպիսի նշանակության արձանագրումը կարող է խթանիչ դեր ունենալ բառը նաև այդ նշանակությամբ գործածելու հարցում:

Սարյանի չափածոյում հետաքրքրական է նաև նորաբանության ոճական գործածությունը հականշային հարաբերության ոլորտում:

Մեկը արագ, մեկը եզաքայլ.

Տարբեր-տարբեր կողմերով: /ՀՍ, 112/

Ինչպես նկատելի է, այստեղ հականշությունը դրսևորվում է նորաբանության և համագործածական բառի միջև, թեև բարեհնչ չէ նոր բառի ձայնական կազմը: Նորաբանությամբ արտահայտված հակադրությունով բանաստեղծական խոսքը մեծապես շահում է թարմության առումով:

Քննելով Սարյանի չափածոյում գործածված նորակազմ բառերն ու այլ կարգի նորաբանությունները՝ կարող ենք ասել, որ Գեղամ Սարյանն ինքնատիպ ձեռագիր ունի այս ասպարեզում: Աշխարհն ու երևույթները բանաստեղծական յուրահատկությամբ ընկալելու և արտահայտելու ներուժով նա ստեղծում է նոր կազմություններ: Դրանցից շատերը ընդգրկվել են արդի հայերենի բառարաններում: Այսպիսով, Գեղամ Սարյանի նորաբանություններում գերակշռող են բարդությունները, որոնք, որոշ բացառություններով, իրենց կառուցվածքով, արտահայտած իմաստներով, ոճական արժեքով ընդունելի ձևեր են:

Վերը արված դիտարկումները վկայում են, որ բազմաբնույթ նորաբանությունները էական նշանակություն են ունեցել Սարյանի ոճի ինքնատիպության և թարմության ձևավորման համար: